

Հանրապետական
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ. հունվարի 30-ի թիվ 1 նիստում
Ռեկտոր Ռ. Հակոբյան
30.01.2021թ.

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ
ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒ ԼՈՒԾՄԱՆ
ԿԱՐԳ
(փոփոխություններով)**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.

- 1.1. Սույն կարգով սահմանվում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ուսանողների կողմից ներկայացված բողոքների և բողոքարկումների ընդունման, քննարկման, լուծման և ամփոփման ընթացակարգերը:
- 1.2. Սույն կարգի դրույթները տարածվում են ԳՊՀ կրթական բոլոր աստիճաններով և մասնագիտական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների վրա:
- 1.3. Ամփոփիչ ատեստավորման արդյունքի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գնահատականների բողոքարկումը կատարվում է՝ համաձայն «Գավառի պետական համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի ընթացակարգային պահանջների:
- 1.4. ԳՊՀ դիմորդների բողոքներն ու բողոքարկումները կատարվում են համաձայն առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի ընդունելության կարգերի դրույթների:
- 1.5. Բոլոր ձևաչափերով անցկացված քննությունների արդյունքների բողոքարկումը ուսանողի կողմից կատարվում է ԳՊՀ ռեկտորի հրամանով ձևավորված ֆակուլտետային և համալսարանական բողոքարկման հանձնաժողովներում (այսուհետ՝ հանձնաժողով):
- 1.6. Համալսարանական հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝
- ա) ռեկտորը,
 - բ) ուսումնական գծով պրոռեկտորը,
 - գ) համապատասխան ֆակուլտետի դեկանը,
 - դ) համապատասխան ամբիոնի վարիչը,
 - ե) ակադեմիական քաղաքականության բաժնի պետը,
 - զ) ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահը,
 - է) քննող դասախոսը:
- 1.7. Ֆակուլտետային հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝
- ա) համապատասխան ֆակուլտետի դեկանը,
 - բ) համապատասխան ամբիոնի վարիչը,

- զ) ակադեմիական քաղաքականության բաժնի ներկայացուցիչը,
 - դ) քննող դասախոսը,
 - ե) համապատասխան ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը:
- 1.7. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովներում կարող են ընդգրկվել դասախոսներ, համապատասխան մասնագետներ:

II. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՁՅՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ.

- 2.1. ԳՊՀ ուսանողները միջանկյալ և ամփոփիչ քննությունները, լուծարային շրջանում և բաց դռների ժամանակահատվածում քննությունից (ստուգարքից) ստացած անբավարար կամ գիտելիքներից ոչ համապատասխան գնահատականները գրավոր դիմումով բողոքարկում են ֆակուլտետային հանձնաժողովում՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.2. Եթե ուսանողը քննությունը հանձնել է գրավոր, ապա հանձնաժողովը ստուգում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը սահմանված չափանիշներին:
- 2.3. Եթե ուսանողը քննությունը հանձնել է բանավոր, ապա հանձնաժողովը ուսանողի գիտելիքները ստուգում է տվյալ քննական հարցաշարին համապատասխան:
- 2.4. Գիտելիքների գնահատման արդյունքները հանձնաժողովը ստուգում է այն մասով, որն ուսանողը բողոքարկում է:
- 2.5. Ֆակուլտետային հանձնաժողովը մեկ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է բողոքարկումը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝
- ա) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) մնում է անփոփոխ,
 - բ) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ՝ իջեցվում):
- 2.6. Բողոքարկման արդյունքը կարող է կրկնակի բողոքարկվել համալսարանական հանձնաժողովում՝ ֆակուլտետային հանձնաժողովի եզրակացությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.7. Ուսանողի գիտելիքների գնահատման արդյունքի բողոքարկումը քննարկվում է համալսարանական հանձնաժողովի կողմից նաև այն դեպքում, երբ տվյալ դասընթացը դասավանդող դասախոսը համապատասխան ֆակուլտետի ղեկանը կամ ամբիոնի վարիչն է:
- 2.8. Համալսարանական հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է բողոքարկումը և կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝
- ա) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) մնում է անփոփոխ,
 - բ) քննական գնահատականը (ստուգարքի արդյունքները) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ՝ իջեցվում):
- 2.9. ԳՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատականները բողոքարկում են ռեկտորի հրամանով ստեղծված ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման արդյունքների բողոքարկման հանձնաժողովին՝ ԳՊՀ ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն:
- 2.10. Գիտելիքների գնահատման կամ ակադեմիական պարտքերի երկրորդ լուծարքի հանձնման արդյունքների հիման վրա (անբավարար առաջադիմության հիմքով) ԳՊՀ-ից ուսանողի հեռացման մասին համապատասխան ֆակուլտետի ղեկանի կողմից

ներկայացված զեկուցագիրը կարող է բողոքարկվել ԳՊՀ համալսարանական հանձնաժողովին՝ զեկուցագիրը ԳՊՀ ռեկտորին հանձնելու պահից երկու աշխատանքային օրերի ընթացքում:

2.11. Ուսանողը կարող է բողոք ներկայացնել իր հեռացման մասին հրամանի դեմ: Համալսարանական հանձնաժողովը, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, քննարկելով բողոքը (ուսանողի ցանկության դեպքում՝ նրա ներկայությամբ)՝ կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) բավարարել բողոքը, և անվավեր ճանաչել ուսանողի հեռացման մասին ռեկտորի հրամանը,

բ) մերժել բողոքը, և ուսանողի հեռացման մասին ռեկտորի հրամանը թողնել ուժի մեջ:

3. Բողոքարկման ամփոփումը.

3.1. Բողոքարկման հանձնաժողովները կազմում են գրավոր արձանագրություններ, որոնք կցվում են քննական կամ ամփոփիչ ստեստավորման տեղեկագրերին: Գնահատականի փոփոխման դեպքում քննական տեղեկագրում և ստուգարքային գրքույկում կատարվում է համապատասխան գրառում:

3.2. Բողոքարկման արդյունքների մասին ֆակուլտետային հանձնաժողովի նախագահը զեկուցում է ԳՊՀ ռեկտորատի, իսկ համալսարանական հանձնաժողովի նախագահը՝ ԳՊՀ գլխխորհրդի հերթական նիստի ժամանակ:

3.3. Բողոքարկման արդյունքում, երբ համալսարանական հանձնաժողովի գնահատմամբ ուսանողի գնահատականը ակնհայտորեն չի համապատասխանում նրա գիտելիքներին, քննող դասախոսի պատասխանատվության հարցը քննարկվում է ԳՊՀ գլխխորհրդի նիստում:

4. Այլ հարցերով ուսանողների բողոքների քննարկումը.

4. 1. Ուսանողների կողմից այլ հարցերով բողոքներ ներկայացվելու դեպքում բողոքները քննվում են ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում՝ հետևյալ հաջորդականությամբ. ամբիոն, ֆակուլտետային խորհուրդ, ռեկտորատ, գիտական խորհուրդ, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում ԳՊՀ հոգաբարձուների խորհրդում:

4. 2. Այն բողոքները, որոնք վերաբերում են ԳՊՀ-ում ակադեմիական անազնվության դեպքերին, նախապես քննվում են ԳՊՀ ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովում, իսկ բողոքը չբավարարելու դեպքում՝ ռեկտորատում, գիտական խորհրդում:

4. 3. Այն բողոքները, որոնք վերաբերում են ֆինանսական հարցերին, քննվում են ԳՊՀ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների և հաշվապահության հետ մեկտեղ՝ գլխավոր հաշվապահի մասնակցությամբ:

4. 4. ԳՊՀ-ում ակադեմիական ազնվության սկզբունքների, էթիկայի կանոնների խախտումները բողոքարկվում են ԳՊՀ ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովին՝ ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգին համապատասխան: